

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «-----» 2020թ.

N-----Ն

## ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (ՀԱՏԿԱՑՄԱՆ) ԿԱՐԳԸ,  
ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԵՐԸ,  
ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՉԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի  
12-րդ հոդվածի 1-ին մասի 25.1-րդ կետով և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի  
5.2-րդ հոդվածի 2-րդ մասով.

### Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին  
ներկայացվող պահանջները, պայմանները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի  
վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, ժամկետները, պայմանները և  
գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ  
մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ  
ԿԵՏԵՐԻՆ ԼԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ,  
ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ԴՐԱՆՑ  
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (ՀԱՏԿԱՑՄԱՆ) ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԵՐԸ, ԻՆՉՊԵՍ  
ՆԱԵՎ ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման գործունեության թույլտվությունը տալիս է Երևանի քաղաքապետը, եթե շրջիկ առևտրի կետը թույլտվության տրամադրման պահին (ինչպես առաջին, այնպես էլ յուրաքանչյուր հաջորդ անգամ) համապատասխանում է սույն հավելվածով սահմանված պահանջներին և պայմաններին:

2. Շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը տրամադրվում են (հատկացվում են) բացառապես Երևանի քաղաքապետարանի՝ հատուկ այդ նպատակով ստեղծված կայքէջի միջոցով՝ էլեկտրոնային ամրագրման եղանակով՝ մինչև երեք օր ժամկետով: Միաժամանակ դրանց հատկացման տևողությունը չի կարող գերազանցել օրական 14 ժամը եւ առավելագույնը՝ մինչև ժամը 23:00-ն:

3. Շրջիկ առևտրի իրականացման հայտը ներկայացվում է էլեկտրոնային կամ թղթային տարբերակով՝ միաժամանակ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

- 1) տեղական տուրքի վճարման անդորրագիր,
- 2) դիմումատուի պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճեն,
- 3) տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի պատճեն,
- 4) շրջիկ առևտրի կետի լուսանկարներ,
- 5) իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձնագրի պատճեն,
- 6) արտաքին տեսքի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության կողմից տրամադրված եզրակացություն,

4. Շրջիկ առևտրի իրականացման հայտը ներկայացվելուց հետո 6 օրվա ընթացքում շրջիկ առևտրի կետը ներկայացվում է գննության: Եթե գննության ընթացքում ավտոմոբիլի կամ կցորդի վերասարքավորման օրինականության, սանիտարական կամ տեխնիկական անվտանգության նորմերի պահպանության վերաբերյալ հիմնավոր կասկածներ են առաջանում, ապա կարող են պահանջվել տեղեկանքներ՝ տրված համապատասխան պետական կառավարման լիազոր մարմիններից կամ մասնագիտական եզրակացություն՝ լիցենզավորված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից:

5. Շրջիկ առևտրի թույլտվությունը տրամադրվում կամ մերժվում է շրջիկ առևտրի կետի գննությունից հետո 4 օրվա ընթացքում:

6. Շրջիկ առևտրի թույլտվության հետ միաժամանակ տրամադրվում է էլեկտրոնային հարթակից օգտվելու իրավունք:

7. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, առաջացել է սույն որոշման 4-րդ կետում նշված փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտություն, ինչպես նաև դիմումատուն սահմանված ժամկետում շրջիկ առևտրի կետը չի ներկայացրել գննության:

8. Շրջիկ առևտրի թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից:

9. Թույլտվությունը տրվում է մեկ ամիս ժամկետով, սակայն հաջորդ ամիսների համար տեղական տուրքի գումարը վճարված լինելու դեպքում թույլտվությունը համարվում է երկարաձգված՝ առանց վերը նշված ընթացակարգը կրկին անցնելու, իսկ շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջների և պայմանների պահպանության նկատմամբ Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվում է ընթացիկ հսկողություն:

10. Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող ընթացիկ հսկողության արդյունքում խախտումներ հայտնաբերելու պարագայում այդ մասին ծանուցվում է տնտեսվարող սուբյեկտը, որից հետո 3-օրյա ժամկետում թերությունները չվերացնելու դեպքում վերջինիս մուտքը էլեկտրոնային հարթակ արգելվում է:

11. Ծանուցումը ստանալուց հրաժարվելու դեպքում այն հրապարակվում է շրջիկ առևտրի կետում տնտեսական գործունեություն իրականացնող անձի կամ նրա աշխատակցի ներկայությամբ:

12. Առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ շրջիկ առևտրի կետերի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման գործունեության իրականացումն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

## **II. ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

13. Շրջիկ առևտրի կետերը պետք է ապահովված լինեն ապրանքների պահման և մանրածախ առևտրի, ինչպես նաև ծառայությունների մատուցման համար համապատասխան սարքավորումներով:

14. Շրջիկ առևտրի կետ հանդիսացող ավտոմոբիլները և (կամ) դրանց կցորդներ կարող են լինել մինչև 10 մետր երկարության, 2,5 մետր լայնության և 3 մետր բարձրության:

15. Շրջիկ առևտրի կետերը պետք է ապահովված լինեն էլեկտրաէներգիայի արտադրման ավտոնոմ համակարգով, որը պետք է բավարարի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 6-ի «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին թիվ 138 հրամանով հաստատված աղմուկի թույլատրելի նորմերին ներկայացվող պահանջներին, իսկ հանրային սննդի ծառայություն մատուցողները՝ նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N2-III-Ա 2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին թիվ 876 հրամանով հաստատված կանոններին համապատասխանող խմելու ջրի, ինչպես նաև գոյացած կեղտաջրի պահման համար յուրաքանչյուրը առնվազն 100 լիտր տարողունակությամբ հերմետիկ փակ տարաներով:

16. Շրջիկ առևտրի կետը պետք է ապահովված լինի արտաքին լուսավորության համակարգով:

17. Շրջիկ առևտրի կետ հանդիսացող ավտոմոբիլները և (կամ) դրանց կցորդները կողային (մայթին կից) հատվածից պետք է ունենան համապատասխան բացվածք՝ առևտրի իրականացման և (կամ) ծառայությունների մատուցման համար:

18. Շրջիկ առևտրի կետերն անվտանգ կայանման կազմակերպման համար պետք է ապահովված լինեն արգելակման համակարգի հանգույցներով:

19. Շրջիկ առևտրի կետի արտաքին տեսքը և դրա վրա փակցված գովազդն ու ձևավորումը անհրաժեշտ է նախապես ներկայացնել Երևանի քաղաքապետարան՝ հաստատման:

## **III. ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԵՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

20. Շրջիկ առևտրի կետերի միջոցով գործունեություն թույլատրվում է իրականացնել հետևյալ վայրերում՝ տվյալ վայրի համար սահմանված ժամերին և ժամկետում, ընդ որում նշված վայրի համար ամրագրումը մեկ օրից ավել լինելու դեպքում շրջիկ առևտրի կետը նշված վայրում կարող է կայանել մինչև ամրագրման ժամկետի ավարտը, սույն կետով նախատեսված ժամերից դուրս՝ առանց գործունեություն իրականացնելու:

	Վարչական շրջան	Փողոցի և տարածքի անվանում	Ժամեր	Ժամկետներ
1	Աջափնյակ	Ա. Սարգսյան-Ռ. Մելիքյան փողոցների խաչմերուկ	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
2	Աջափնյակ	Հալաբյան փողոց, աջակողմյան հատված՝ 19 շենքի դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
3	Աջափնյակ	Հալաբյան փողոց, «Բուենոս Այրես» այգուն հարակից տարածք	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
4	Աջափնյակ	Մազմանյան-Բեկնազարյան փողոցների խաչմերուկ	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
5	Ավան	Աճառյան փողոց, 1 շենքի /ճգնաժամային ակադեմիայի/ դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
6	Ավան	Իսահակյան թաղամաս, 2 շենքի /Անձնագրային և վիզաների վարչության Ավանի բաժնի/ դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
7	Արաբկիր	Ազատության պողոտա, /Հաղթանակ զբոսայգու դիմացի մայթ/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
8	Արաբկիր	Ազատության պողոտա, /Հաղթանակ զբոսայգու դիմացի մայթ/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
9	Արաբկիր	Գրիբոյեդովի փողոց, 48 /գազալցակայանի/ դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
10	Արաբկիր	Լեո Կամսարի փողոց, 40 /Ամերիկյան համալսարանի/ դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
11	Արաբկիր	Կոմիտասի պողոտա, 1 շենքի /Հայբիզնեսբանկի/ դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
12	Արաբկիր	Կոմիտասի պողոտա, 49 շենքի դիմացի պուրակ	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
13	Արաբկիր	Հ. Հակոբյան փողոց, 1 շենքի դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
14	Արաբկիր	Մամիկոնյանց փողոց, 27 շենքի դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
15	Արաբկիր	Մամիկոնյանց փողոց, 34ա շենքի դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
16	Արաբկիր	Մամիկոնյանց փողոց, 35 շենքի դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
17	Արաբկիր	Ն. Զարյան փողոց, 25 շենքի դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
18	Արաբկիր	Ռիգայի փողոց, /Սլավոնական համալսարանի դիմաց/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
19	Արաբկիր	Վ. Փափազյան փողոց, վերջնամաս /Մանկական զբոսայգու դիմաց/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 2 օր
20	Դավթաշեն	Աշտարակի խճուղի	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
21	Դավթաշեն	Դավթաշեն 2-րդ թաղամաս, /այգու հարևանությամբ/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
22	Դավթաշեն	Եղվարդի խճուղի, 26 շենքի կողքը	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
23	Էրեբունի	Ազատամարտիկների փողոց, 78 / Մանկական այգու հարևանությամբ/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
24	Էրեբունի	Մուրացանի փողոց, /հոսպիտալի հարևանությամբ/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
25	Էրեբունի	Սասունցի Դավթի հրապարակ /կայարանամերձ տարածք/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
26	Էրեբունի	Տիտոգրադյան փողոց, 4 շենքի /հիվանդանոցի/ դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
27	Կենտրոն	Աբովյան փողոց, /Հայաստանի ազգային ազրարային համալսարանի դիմաց/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	1 օր
28	Կենտրոն	Ալ. Մանուկյան փողոց, /Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ի նստիտուտի դիմաց/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	1 օր

29	Կենտրոն	Ալ. Մանուկյան փողոց, /Երևանի պետական համալսարանի դիմաց/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	1 օր
30	Կենտրոն	Խանջյան փողոց, /Երաժշտական դպրոցի դիմաց/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	1 օր
31	Կենտրոն	Ծիծեռնակաբերդի խճուղի, /Հրազդան մարզադաշտի հարակից տարածք/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	1 օր
32	Կենտրոն	Կորյունի փողոց, /Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի դիմաց/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	1 օր
33	Կենտրոն	Կորյունի փողոց, /Երևանի հենակետային բժշկական քոլեջի դիմաց/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	1 օր
34	Կենտրոն	Չարենցի փողոց, /Երևանի պետական համալսարանի հարակից տարածք/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	1 օր
35	Կենտրոն	Տերյան փողոց, /Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի դիմաց/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	1 օր
36	Կենտրոն	Լենինգրադյան փողոց, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի դիմացի ավտոկայանատեղի	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	1 օր
37	Մալաթիա-Սեբաստիա	Անդրանիկի փողոց, 74 շենքի /Հայաստան կ/թ/ ն եկեղեցու հարակից տարածք	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
38	Մալաթիա-Սեբաստիա	Անդրանիկի փողոց, /Չ. Անդրանիկի արձանի դիմաց/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
39	Մալաթիա-Սեբաստիա	Անդրանիկի փողոց, /Մայրության այգու հարևանությամբ/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
40	Մալաթիա-Սեբաստիա	Բաֆֆու փողոց, /եկեղեցու դիմաց/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
41	Նոր Նորք	Գայի պողոտա, 16 շենքի դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
42	Նոր Նորք	Գյուրջյան փողոց, 8 շենքի դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
43	Նորք-Մարաշ	Նորքի 5-րդ փողոցի 8 շենքի դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
44	Նուբարաշեն	Նուբարաշեն 7-րդ փողոց, /Նուբարի այգու հարակից տարածք/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
45	Նուբարաշեն	Նուբարաշեն 11-րդ փողոց, /այգուն կից տարածք/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
46	Շենգավիթ	Արշակունյաց պողոտա, 39 շենքի դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
47	Շենգավիթ	Արարատյան փողոց, 43 հասցեին հարակից տարածք	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
48	Շենգավիթ	Արտաշատի խճուղի, 11 հասցեին հարակից տարածք	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
49	Քանաքեռ-Զեյթուն	Դ. Անհաղթի փողոց, 4 շենքի դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
50	Քանաքեռ-Զեյթուն	Դրոյի փողոց, 9 շենքի դիմաց / շատրվանների հարևանությամբ/	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
51	Քանաքեռ-Զեյթուն	Զ. Սարկավազի փողոց, 131 շենքի դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր
52	Քանաքեռ-Զեյթուն	Հր. Ներսիսյան փողոց, 7 շենքի /արյունաբանական կենտրոնի/ դիմաց	09 <sup>00</sup> -23 <sup>00</sup>	մինչև 3 օր

**IV. ՇՐՋԻՎ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՍ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

21. Շրջիկ առևտրի կետում չի թույլատրվում վաճառել՝

- 1) գյուղատնտեսական արտադրանք,
- 2) մսամթերք,
- 3) ծովամթերք,

- 4) կաթնամթերք,
- 5) կենդանիներ
- 6) դեղեր և բժշկական նշանակության արտադրանք,
- 7) շինանյութ,
- 8) ավտոպահեստամասեր,
- 9) հրավառության կամ հրագործական արտադրանք,
- 10) պարֆումերիա-կոսմետիկական ապրանքներ
- 11) կենցաղային և համակարգչային տեխնիկա,
- 12) աուդիո և վիդեո արտադրանք,
- 13) կենդանիների խնամքի համար նախատեսված իրեր,
- 14) որսորդական պարագաներ,
- 15) տնտեսական ապրանքներ և գրենական պիտույքներ,
- 16) պահպանակներ, միջադիրներ և հիգենիայի այլ պարագաներ,
- 17) ծխախոտի արտադրանք,
- 18) թունդ ոգելից խմիչքներ,
- 19) հեղուկ վառելիք, հեղուկացված նավթային գազ, տեխնիկական հեղուկներ,
- 20) մանկական կերեր,
- 21) այլ ապրանքներ, որոնց իրացումն արգելված կամ սահմանափակված է Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ:

22. Շրջիկ առևտրի կետերում չի թույլատրվում մատուցել՝
  - 1) վարսահարդարման և դիմահարդարման ծառայություններ,
  - 2) ինտերնետ ծառայություններ,
  - 3) բանկային կամ արտարժույթային ծառայություններ,
  - 4) կապի և հեռահաղորդակցման ծառայություններ,
  - 5) բժշկական ծառայություններ,
  - 6) կացարանի տրամադրում և այլ հյուրանոցային ծառայություններ,
  - 7) ցանկացած տեսակի մերսման ծառայություններ:

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ԴՐԱՆՑ ՏՐԱՍՍԴՐՄԱՆ (ՀԱՏԿԱՑՄԱՆ) ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ,  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ  
ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՍ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ  
ՏԵՍԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 25.1-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին սահմանում է շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, ժամկետները, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, ժամկետները, պայմանները և գործունեության իրականացման թույլատրելի ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները սահմանվում են Երևան համայնքի ավագանու որոշմամբ:

Վերը նշված օրենքների պահանջը կատարելու, ինչպես նաև գործունեության տվյալ ոլորտը կարգավորելու նպատակով մշակվել է սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (ՀԱՏԿԱՑՄԱՆ) ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ՍԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, ժամկետները, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (ՀԱՏԿԱՑՄԱՆ) ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ՍԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, ժամկետները, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ



## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԻՆ  
ՆԵՐԿԱՑԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (ՀԱՏԿԱՑՄԱՆ) ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ,  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ  
ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ  
ՏԵՍԱԿՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ  
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության , առարկության հեղինակը	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով	Առաջարկություն, առարկություն չի ներկայացվել	Տրվել է դրական եզրակացություն
2.	ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննություն և գործակալություն	<p>1/ Նախագծի վերնագրի դրույթներն անհրաժեշտ է համապատասխանեցնել նախագծի ընդունման իրավական հիմք հանդիսացող «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին:</p> <p>2/Հավելվածի 3-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն նախատեսվում է, որ. «7/անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել լրացուցիչ այլ փաստաթղթեր՝ վերասարքավորման, սանիտարահիգիենիկ կամ անվտանգության վերաբերյալ»: Այդ առումով անհրաժեշտ է պարզաբանել, թե որոնք են «անհրաժեշտության» դեպքերը և յուրաքանչյուր դեպքի համար հստակ նշել, թե ինչ փաստաթղթեր են պահանջվում ներկայացնել, այլապես, «լրացուցիչ այլ փաստաթղթերի» պահանջը առանց հստակեցման կարող է առաջացնել կոռուպցիոն ռիսկեր:</p> <p>Այդ առումով անհրաժեշտ է վերանայել նաև հավելվածի 5-րդ կետի «եթե գնությունից հետո լրացուցիչ փաստաթղթերի անհրաժեշտություն չի առաջացել» դրույթը:</p> <p>3/Հավելվածի 9-րդ կետում պարզաբանման կարիք ունի, թե ում կողմից և ինչ կարգով է իրականացվում «ընթացիկ հսկողություն»-ը:</p> <p>4/ Հավելվածի 10-րդ կետով նախատեսվում է, որ ընթացիկ հսկողության ընթացքում խախտումներ հայտնաբերվելու դեպքում այդ մասին ծանուցվում է տնտեսվարող սուբյեկտը, որից հետո 3-օրյա ժամկետում թերությունները չվերացնելու դեպքում վերջինիս տրամադրված թույլտվությունը համարվում է ուժը կորցրած, իսկ մուտքը էլեկտրոնային հարթակ</p>	<p>Ընդունվել է: Լրամշակված նախագիծը ներկայացվում է:</p> <p>(Կցվում է)</p>

		<p>արգելվում է: Այդ առումով անհրաժեշտ է հստակեցնել, թե ում կողմից է իրականացվելու հիշյալ կետով նախատեսված ընթացիկ հսկողությունը:</p> <p>5 /Հավելվածի 12-րդ կետում «օրենսդրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով, որ պատասխանատվությունը սահմանվում է օրենքով: Հիշյալ դիտողությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի պահանջներից:</p> <p>6/ Հավելվածի 14-րդ կետից անհրաժեշտ է հանել «միայն» բառը:</p> <p>7/Հավելվածի 15-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել, թե ինչ իրավական ակտերով են սահմանվում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ անվտանգության, բնապահպանական և աղմուկի թույլատրելի նորմերին ներկայացվող պահանջներ»-ը և «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ խմելու ջրի պահպանման տարաներին ներկայացվող պահանջներ»-ը:</p> <p>8/Հավելվածի 21-րդ կետի աղյուսակում «Ժամեր» սյունակում ժամերը նշված չեն:</p>	
--	--	---	--